Ընդ սիրոյ ողջունիս յուշ լիցի վերոյգրեալ հոգեւոր որդւոց մեր, զի եկն առ մեզ առաքեալ դեսպանն ձեր Խօճայ Նիկողայոսն՝ հանդերձ թղթով ձեռով և խնդրուածովք և ընծայիւք։ Բայց մեր յառաջ քան զգալուստ Խօճայ Նիկողայոսին, ըստ կանխագոյն խոստման մեր՝ առաքեալ էաք զսիրեցեալ որդեակն մեր զՅոհան վարդապետն. որ է յոյժ հաւատարիմ մեր և գիտակ ամենայն խորհրդոց մերոց. և վասն ձերոյ որպիսութեանն մի ըստ միոջէ պատուիրեալ էաք. քանզի վասն ձերոյ օգտի և ազատութեան եկեղեցեացն ուղարկեցաք։ Իսկ այժմ եկն առ մեզ Խօճայ Նիկողայոսն, և իմացեալ ծանեաք զամենայն որպիսութիւն ձեր և զխնդիր. ըստ հայրական գրոյ յաղթեալ՝ զամենայն խնդրուածս ձեր կատարեցաք. մի ըստ միոջէ[1] թուղթ ըստ սրտի ձերոյ՝ թէ առ սրբազան Պապն և թէ գերապայծառ թագաւորն, և թէ առ լուսապայծառ արքեպիսկոպոսն. նա և զձեր առաքեալ Ջեռնադրութեան գիրքն եւս ձեռագրեցաք, ըստ հայցման ձեր։ Սիրեցեալ որդիք, որպէս բազում անգամ գրեալ եմք, եթէ մերով մահուամբ եւս լինէր հնար փրկութեան ձերոյ և ազատութեան, ոչ խնայէաք, որպէս ծածկագիտին է յայտնի. արդ ի մերմէ կողմանէ զոր ինչ էր խնդիր ձեր՝ կատարեցաք, այսուհետեւ մնայ ձեր քաջութիւնն. եթէ ճշմարիտ ցաւ ունիք այդ եկեղեցւոյդ ազատութեան, պարտիք յամենայն անձնէ, յամենայն զօրութենէ, յամենայն մտաց իսկապէս ջանալ, զի թերեւս լիցի վերջ տառապանաց ձերոց, և խստագոյն վշտացդ։ Վասն որոյ պատուիրելով պատուիրեմ և հարկաւորաբար պահանջեմ ի ձէնջ՝ զայսքան բան. Նախ և առջին, կատարելապէս միաբանութիւն և սէր առ միմեանս, մեծամեծաց և փոքունց, քահանայից և դատաւորաց, տօլվաթաւորաց և ժողովրդոց, ամենեքեանդ միապէս ջանայք վասն ձերոյ ազատութեան. քանզի առանց միաբանութեան անհնար է այդմ գործոյ աւարտ լինելն. զի միաբանութիւնն մայր է ամենայն բարեաց, և անմիաբանութիւնն մայր ամենայն չարեաց. այդքան վիշտ որ առ ձեզ պատահեցաւ, պատճառն ամենայն՝ անմիաբանութիւնն էր. զճաշակս առէք անմիաբան լինելոյն։ Թէ Ս. Լուսաւորչին հարազատ որդի էք, և զմեր աւրհնութիւնն կամիք, և այդ գործոյդ աւարտ կամիք լինել, պիտի որ ամենեքեանդ միակամ և միախորհուրդ լինիք. այսուհետեւ ի ձեր մէջն այլ երկձղութիւն չլինի։ — Երկրորդ, պահանջեմ ի ձէնջ կատարելագոյն հնազանդութիւն առ սուրբ աթոռն և առ Ս. Լուսաւորչի փոխանորդն. զի հանգոյն ամենայն աշխարհաց՝ ըստ սահմանի Հայաստանեայց եկեղեցւոյ՝ զձեր հնազանդութիւնն ունիցիք, և եպիսկոպոս և առաջնորդ ի նմանէ ընդունիջիք, և զամենայն հնազանդութիւն արդեամբ ցուցանիցէք. որպէս ի հայրենի սովորութեանց առ ձեզ հասեալ է՝ զամենայնն անթերի կատարեսջիք։ — Երրորդ, պահանջեմ ի ձէնջ, վրէժխնդիր ի վերայ ձերոյ հայրենի աւանդութեանն, որ ամենեւին եկեղեցական արարողութեան մէջն աւելի պակաս բան չխառնէք. այլ որպէս է սահմանադրութիւն

1. Պակասէ բառն էրէցոտ կամ պոռոտ։